ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԱՔՍԻՄ ԳԻԼՈՅԱՆ. «ԿՐԵՄԼԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ ՄԵՐ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՊԱՆԻՐՆ ԷԻՆ ՀԱՄՏԵՍՈՒՄ»



*«Վրաստան» թերթի հունիսի 17-ի համարում հրապարակված Վրաստանի պանիր արտադրողների ասոցիացիայի նախագահ Անա Միքաձեի հետ «Վրաստանում գրեթե բոլորը, ովքեր կով ունեն, պանիր են պատրաստում, բայց…» հարցազրույցը, բավական լայն արձագանք ունեցավ: Խմբագրության էլեկտրոնային փոստով նամակներ ստացվեցին հարցազրույցում բարձրացված հարցերի շուրջ` Ախալքալաքիից, Նինոծմինդայից, Ախալցիխեից, Ծալկայից, անգամ Դեդոփլիսծղարոյի մունիցիպալիտետի Սաբաթլո գյուղից… Նամակներում հեղինակներն իրենց կարծիքն են ներկայացնում գյուղատնտեսական փոքր եւ միջին արտադրություններում պանրի արտադրության կազմակերպման հետ կապված դժվարությունների վերաբերյալ, առանձնակի շեշտը դնում` կաթի որակի, պանրի պատրաստման տեխնոլոգիայի բարդության, պատրաստի արտադրանքի իրացման հիմնախնդիրներին:*

*Թեման մանրամասնելու նպատակով, խմբագրությունը կապվեց վերոնշյալ հոդվածում հայտնի պանրագործ եւ այդ ոլորտում փորձառու կազմակերպիչ հիշատակված ախալքալաքցի Մաքսիմ Գիլոյանի հետ:*

*Ստորեւ ներկայացնում ենք տեխնիկական գիտությունների թեկնածու Մաքսիմ Գիլոյանի հետ հարցազրույցը:*

***- Մաքսիմ Միհրանի, նախ շնորհակալություն, որ համաձայնեցիք պատասխանել «Վրաստանի» հարցերին:***

- Շնորհակալություն Ձեզ, որ կրկին անդրադառնում եք այդ թեմային: Տիկին Անա Միքաձեն` մեր ասոցիացիայի նախագահը, բավական հստակ ներկայացրեց ոլորտի բարդություններն ու դժվարությունները, գլխավոր մարտահրավերները: Շնորհակալություն նրան, նաեւ շնորհակալություն, որ իր հարցազրույցում հիշատակեց մեր երկրամասի պանրագործներին:

***- Դեռեւս խորհրդային տարիներից Դուք եք զբաղվում այդ գործով, տարիներ շարունակ գլխավորում եք Ախալքալաքիի յուղպանրագործարանը:***

- Իրոք այդպես է, եւ անկեղծորեն ասեմ, որ հենց այդ ժամանակներից էլ «Ախալքալաքյան պանրի» համբավը տարածվել էր ոչ միայն Վրաստանում, այլեւ Խորհրդային Միության բոլոր երկրներում: Մեր պանիրը լայն պահանջարկ էր վայելում Խորհրդային Միության այնպիսի խոշոր կենտրոններում, ինչպիսիք են Մոսկվան, Լենինգրադը, Կիեւը, Խարկովը… Մեր պանիրը ներկայացվել է անգամ Կրեմլում` պաշտոնական ճաշկերույթներին, եւ արժանացել բարձր գնահատականի: Կրեմլում համտեսում էին նաեւ Ախալքալաքիում պատրաստած «Շվեյցարական» պանիրը, Դրա ապացույցն Ախալքալաքիի յուղպանրագործարանի հասցեով ստացված Խորհրդային Միության ղեկավար Լեոնիդ Բրեժնեւի ստորագրությամբ շնորհակալագիրն է… Ասում էին նաեւ, որ Անաստաս Միկոյանը բոլորից շատ գերադասությունը տալիս էր մեր «Ջավախեթյան պանրին», Ախալքալաքիում պատրաստած մեր «Գուդային», որ այստեղից հատուկ նրա համար էր ուղարկվում:

Երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, ցավոք, ժամանակի մեծ երկրի շատ ու շատ ձեռնարկություններում ստեղծվեցին այնպիսի պայմաններ, որ մեր գործարանը` որպես արտադրական միավորում, դադարեց գոյություն ունենալ: Մենք` նախկին գործարանի մի քանի աշխատակիցներս, որոշեցինք հիմնել պանրի արտադրության կոոպերատիվ, որոշակիորեն պահպանել Ախալքալաքիի պանրի արտադրության ավանդույթը:

***- Եվ դա Ձեզ հաջողվեց…***

- Սկզբում, այսինքն հիմա էլ դժվարությունները շատ են: Ծանր ու քրտնաջան աշխատանք, անկախ նրանից հանգստի օր է, թե տոնական, գիշեր կամ ցերեկ: Հարկ է ուշադրության կենտրոնում պահել պանրի արտադրության տեխնոլոգիայի յուրաքանչյուր օղակը, նրբությունը: Մեր հոգատարության առանձնակի ուղղությունը ստացվող կաթի որակն է:

***- Բայց չէ՞ որ այդ ամենի իրականացման համար անհրաժեշտ են պատկառելի գումարներ…***

- Այո', իրավացի եք: Պանրի արտադրության համար անհրաժեշտ են ժամանակակից սարքավորումներ, որակի ստուգման սարքեր, էլ չեմ խոսում շատ հաճախ կանխիկ գումարներով գնվող կաթի մասին…

***- Եվ Դուք գտա՞ք հովանավորներ, ֆինանսավորման աղբյուր…***

- Սկզբում մեր գործունեությամբ հետաքրքրվեցին արտասահմանյան շատ կազմակերպություններ, եկան, ուսումնասիրեցին, իրենց առաջարկներն արեցին… Որոշակի օգնություն ցուցաբերեցին, իհարկե` ոչ բոլորը: Իրական օգնություն այն ժամանակ ստացանք, եւ դա այսօր էլ շարունակվում է գյուղատնտեսական արտադրության հարցերով զբաղվող «Մերսի Քորպսի» ընկերության կողմից, ինչի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում այդ ընկերությանը:

Ընդգծեմ նաեւ, որ պանրի արտադրության գործում նշանակալի է նաեւ փոխհամագործակցությունը: Մասնավորապես, մեր արտադրությունը սերտորեն համագործակցում է Նինոծմինդայի նման մի քանի արտադրությունների հետ: Այնտեղ կան իրենց գործի հմուտ կազմակերպիչներ, ինչպիսիք են, օրինակ, տիկին Անա Միքաձեի կողմից հիշատակված Մելս Բդոյանն ու Արարատ Ղազարյանը:

***- Որպես կարեւոր գործոն` մի քանի անգամ հատուկ նշեցիք ստացվող կաթի որակը…***

- Կաթի որակը պանրի արտադրության հիմքերի հիմքն է: Պետք է հասկանալ, թե ինչ է ուզում կաթը, որպեսզի պանիրը նույնպես բարձրորակ ստացվի, քանի որ կաթը նույնպես կենդանի օրգանիզմ է: Բնականաբար, միշտ չէ, որ ստացվող կաթը համապատասխանում է մեր ներկայացրած պահանջներին, չնայած հնարավորինս արվում է պանրի արտադրության տեխնոլոգիայի խստիվ պահպանման ուղղությամբ: Իսկ դա, հավատացեք, այնքան էլ հեշտ գործ չէ: Ամենօրյա արտադրությունում մշակվում է 2-3 տոննա կաթ:

***- Հավանաբար, առանձնակի ուշադրություն է հատկացվում սանիտարահիգիենիկ պայմաններին:***

- Բնականաբար, անմիջականորեն մեր երկրի պետական համապատասխան գերատեսչությունների կողմից ներկայացված են սանիտարահիգիենիկ բավական խստացված պայմաններ: Հենց իրավասու մարմինների կողմից էլ պարբերաբար անցկացվում են ստուգումներ, ձեւակերպվում` համապատասխան բազմաթիվ փաստաթղթեր: Ողջ պատասխանատվությամբ կարող եմ հայտարարել, որ ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջների 98 տոկոսի կատարումը մեզանում ապահովված է, ինչը եւ անդրադառնում է մեր թողարկած պանրի որակի վրա:

***- Ձեզ համարում են «Գործարանային պանրի արքա», նաեւ նշվում է, որ ինքներդ եք ստեղծում պանրի նոր տեսակների դեղատոմսեր: Հիմնականում պանրի ի՞նչ տեսականի եք ներկայացնում:***

- Մեր տեսականին բավական շատ է, արտադրում ենք Վրաստանում քաջ հայտնի «Սուլուգունի», «Գուդա», «Ապխտած պանիր», «Թարխունով վրացական պանիր»…

***- Իսկ ո՞րն է Ձեր արտադրության «բրենդը»:***

- Դա իմ դեղատոմսով պատրաստվող «Ախալքալաքյան պանիրն» է: Միանգամից ասեմ, որ այդ պանրի առաջին իսկ արտադրումից հետո, պահանջարկն անմիջապես աճեց: Այսօրվա դրությամբ, Վրաստանում մի քանի գործարաններ արդեն հինգ տարի է, ինչ թողարկում են «Ախալքալաքյան պանիր»:

***- Իրոք, Ձեր պանիրը որակով է, եւ, որքանով տեղեկացված ենք, այն իրացվում է Վրաստանի գրեթե ողջ տարածքում: Իսկ չէ՞ք ծրագրում ընդլայնել իրացման շուկան, պանիրը արտահանել արտասահման…***

- Իհարկե, աշխատում ենք այդ ուղղությամբ: Սակայն անկեղծորեն ասեմ, որ, այսօրվա դրությամբ, մեր արտադրանքով Եվրոպա դուրս գալ չենք կարող. այնտեղ ներկայացվող պահանջները բավական բարձր են: Սկսենք թեկուզ նրանից, որ կաթի արտադրության մեր ֆերմաներն իրենց կարողություններով ու հնարավորություններով բավական թույլ են: Հասարակ օրինակ, կովերի կուրծքը կթելուց առաջ չեն լվանում անգամ, կթիչ սարքեր ֆերմաներում կա'մ ընդհանրապես չկան, կա'մ շատ քիչ են, կթելուց հետո կաթը, պահանջի համապատասխան, պետք է անմիջապես հասցվի գործարան, իսկ մենք դրա հնարավորությունը դեռեւս չունենք… Եվրոպական շուկա դուրս գալու ցանկություն ունենք, այժմ աշխատում ենք այդ ցանկությունն իրականություն դարձնել:

***- Դե', ի՞նչ, Ձեզ հաջողություն` Ձեր ցանկությունների իրականացման գործում, եւ շնորհակալություն հարցազրույցի համար:***

*Զրուցեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ*

ԽՈՍՔ` ԸՆԿԵՐՈՋ ՄԱՍԻՆ



# ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

## ՆԱ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՂԵԼ Է ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՇՐՋԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ, ԱՊԱ` ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԵԼ ԵՐԿՐԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՈՒ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մենք վերջին հրաժեշտը տվեցինք եւ հավերժություն ճանապարհեցինք Միքայել (Միշա) Գրիգորյանին` արժանավոր մարդուն ու քաղաքացուն: Այդ հիանալի թբիլիսցու մահվան լուրը նրան ճանաչող մարդկանց մեծ ցավ պատճառեց: Իսկ նրան շատերն էին ճանաչում, եթե հաշվի առնենք մեր անբասիր ընկերոջ տասնամյակների ընթացքում Վրաստանի քաղաքական, հասարակական, տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում անցած հարուստ ուղին:

Այսօր Միշա Գրիգորյանին բարի խոսքերով են հիշում Թբիլիսիի 26 կոմիսարների (ներկայիս` Իսանիի) շրջանի նախկին կոմերիտականները, որտեղ նա աշխատում էր` որպես կոմերիտշրջկոմի քարտուղար, ապա Վրաստանի ԼԿԵՄ Կենտկոմի աշխատող երիտասարդների բաժնի վարիչ: Նշենք նաեւ, որ ի տարբերություն կոմերիտական իրենց անցյալից «ամաչող» որոշ «շուռտվածների», Միքայել Գրիգորյանը երբեք չէր թաքցնում իր պատկանելությունը Վրաստանի կոմերիտական վերնախավին, ընդհակառակը դրանով հպարտանում էր, քանի որ բոլոր այն տեղերում, որտեղ նրան վիճակվել էր գործել, աշխատում էր ազնիվ ու բարեխիղճ ձեւով` անկյունաքարը համարելով գործի շահերը: Այդպես էր ձեռք բերում հեղինակություն, այդպես էր արժանանում ճանաչման: Եվ բնական էր նրա պաշտոնական առաջընթացը:

1979 թվականին 35-ամյա Միքայել Գրիգորյանն ընտրվեց նախ` Մառնեուլիի շրջգործկոմի փոխնախագահ, իսկ 1983 թվականից, գրեթե 8 տարի, շրջգործկոմի նախագահն էր: Այն ժամանակաշրջում Մառնեուլիի շրջանը համարվում էր Վրաստանի առավել խոշոր եւ տնտեսապես զարգացած շրջաններից մեկը եւ, միաժամանակ, ամենաբարդն էր` իր բազմազգ բնակչությամբ, որտեղ բարձր պաշտոն զբաղեցնող անձից պահանջվում էր ոչ միայն բարձր արհեստավարժություն, այլեւ մարդկանց ու նրանց կարիքների նկատմամբ ուշադրություն, բարյացակամ վերաբերմունք: Մառնեուլիի գործկոմի նախագահի պաշտոնում լրիվությամբ ի հայտ եկան Միքայել Գրիգորյանի կազմակերպչական հմտությունները, ամենաբարդ տնտեսական հարցերի, ինչպես նաեւ տեղական բնակչությանը հուզող կենսական հիմնախնդիրների հստակ ու որակյալ լուծման նրա ունակությունները: Ապա դրան հաջորդեցին պատասխանատու պաշտոնները Վրաստանի նախարարների խորհրդում եւ երկրի արդյունաբերության նախարարությունում: Այդ ընթացքում նա պարգեւատրվեց Խորհրդային Միության «Պատվո նշան» եւ Վրաստանի «Պատվո» շքանշաններով:

Ասածին ավելացնենք, որ Միքայել Գրիգորյանը` մեր արժանի ընկերը, հիանալի զրուցակից էր, բացառիկ թամադա:

Սակայն, Միքայել Գրիգորյանի ամենանշանակալի ձեռքբերումը նրա ամուր ու գեղեցիկ ընտանիքն էր, որը նա կազմել էր կնոջ` Նանա Մելիք-Օհանյանի հետ: Եվ ուրախալի է, որ մեծերի օրինակով, նույնքան ամուր ու հրաշալի ընտանիքներ են ստեղծել Գրիգորյանների հաջորդ սերունդները` որդին Վլադիմիրը եւ հարսը` Նինան, նրանց զավակները: Ցավոք, ճակատագրի բերումով, Գրիգորյանների Թբիլիսյան այդ հիանալի ընտանիքի ավագ եւ կրտսեր սերունդները հաստատվել են տարբեր քաղաքներում:

Ու ստացվեց այնպես, որ Միքայել Գրիգորյանի մահվան պահին նրա ընտանիքի առանձին անդամները գտնվում էին ոչ միայն տարբեր քաղաքներում, այլեւ տարբեր երկրներում, բայց դա չխանգարեց հրաժեշտի պահին հավաքվել Թբիլիսիում եւ միասին վերջին ուղի ճանապարհել հորը, սկեսրայրին, պապին…

*Բարեկամներ, ընկերներ, գործընկերներ*

«Վրաստան» թերթի խմբագրակազմն իր վշտակցությունն է հայտնում «Վեչերնի Տբիլիսի» թերթի խմբագրի տեղակալ Նանա Մելիք-Օհանյանին, ամուսնու`

*Միքայել (Միշա) ԳՐԻԳՈՐՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

# ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԾԱԳՈՒՄ ԲԱՐԴՈՒՅԹՆԵՐԸ



***Հոգեբանները հաճախ են խոսում մարդկանց այս կամ այն կոմպլեքսների մասին, նշում դրանց բացասական ազդեցությունները: Սակայն, առիթ չեմ ունեցել լսել, թե ինչի՞ց են առաջանում այդ կոմպլեքսները: Գուցե դո՞ւք օգնեք:***

***Ս.ԴՈՒՐԳԱՐՅԱՆ***

***Ախալցիխե***

Ընդհանրապես, ողջ կյանքում մարդուն ուղեկցող բարդույթները (կոմպլեքսները) հենց մանկության տարիներին են ձեւավորվում: Գտնելով՝ այդ խնդիրների ակունքը՝ հնարավոր է ոչ միայն դրանք սրբագրել, այլեւ կանխել երեխաների մեջ հնարավոր բարդույթների առաջացումը:

**Թերարժեքության բարդույթ.** Դուք հրաշալի կազմվածք ունեք, բայց կարծում եք, որ պետք է մի քիչ նիհարել, հիվանդագին եք ընդունում ցանկացած քննադատություն, ձեր հասցեին անզգույշ դիտողությունը կարող է ձեզ հուսահատության հասցնել: Ինքնավստահ չեք: Այս ամենը թերարժեքության բարդույթի ախտանշաններ են:

Հնարավոր է, որ ձեր ծնողները մանկության տարիներին շատ քիչ են ձեզ գովել: Երբեմն էլ գուցե անզգույշ արտահայտություններ են թույլ տվել ձեր արտաքինի, խելքի, ձեռքբերումների մասին: Այդ ամենը հետք է թողնում երեխայի հոգում: Հնարավոր է նաեւ, որ ձեր ծնողները չեն արտահայտել իրենց սերը՝ կարծելով, որ դրա կարիքը չկա, դա ինքնըստինքյան պարզ է, եւ արդյունքում, երեխան ցածր ինքնագնահատականով է մեծանում:

**Մեղավորության բարդույթ.** Եթե ցանկացած անհաջողության պատճառ ձեզ եք վերագրում, օրինակ, երեխան ցածր գնահատական է ստացել, ուրեմն դուք նրա հետ լավ չեք պարապել, ձեր ամուսինն ավելի հաճախ ընկերների հետ է ժամանակ անցկացնում, քան ձեզ հետ: Պատճառն այն է, որ դուք ժամանակ չունեք նրան տրամադրել եւ այլն: Ախտորոշումը պարզ է, դուք մեղավորության բարդույթ ունեք, որը հաճախ առաջանում է շատ երիտասարդ ծնողներ ունեցող երեխաների մեջ: Քսան տարեկան կնոջ համար շատ դժվար է իր ժամանակը, արտաքինը, զվարճությունները զոհել հանուն մայրության: Այդ ժամանակ երեխան ընկալվում է՝ որպես կյանքի խոչընդոտ, կարիերայի, տղամարդկանց հետ հարաբերությունների հարցերում: Այդ վրդովմունքը միշտ չէ, որ հաջողվում է թաքցնել, եւ երեխան մեծանում է իր իսկ գոյության համար մեղավորության զգացումով:

Մյուս պատճառը կարող է ծնողների չափից ավելի պահանջկոտությունը լինել:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

# ԻՆՉՊԵՍ ՄԱՔՐԵԼ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ




***Գրեթե բոլորը փանը համակարգիչ ունեն, սակայն բոլորը չէ, որ գիտեն ինչպես վարվել, երբ համակարգչի աշխատանքում հիմնախնդիրներ են ծագում:***

***Ստորեւ ներկայացնում ենք «Վրաստանի» ընթերցող, մասնագիտությամբ համակարգչային ծրագրավորող Վիգեն Սիմոնյանի՝ համակարգիչը մաքրելու նրբությունների մասին խորհուրդը:***

Ստեղնաշարը պետք է շրջել եւ թափ տալ, որպեսզի ստեղների արանքներում կուտակված փոշին թափվի: Դրանից հետո կարելի է փոշեկուլով մաքրել: Ստեղների արանքներից կեղտը կարելի է հեռացնել օճառի կամ սպիրտի լուծույթում թրջած բամբակե ձողիկով, իսկ ստեղնաշարի բոլոր հասանելի մակերեսները շփել մանրէազերծիչ անձեռոցիկներով:

Մոնիտորը պետք է մաքրել միկրոֆիբրայի չոր շորով կամ մոնիտորի համար նախատեսված հատուկ խոնավ անձեռոցիկներով: Չի կարելի օգտագործել սպիրտ: Միշտ պետք է մաքրել անջատված վիճակում, պետք չէ ուժեղ սեղմել:

Մկնիկը, եթե գնդիկավոր է, պետք է սրբել սպիրտի մեջ թրջած բամբակե ձողիկներով: Միայն պետք է տակի հատվածը քանդել եւ հանել գնդիկը, որը հաճախ իր վրա է հավաքում մակերեսի ողջ փոշին: Լազերային մկնիկը պարզապես պետք է շփել, եւ այդ նույն բամբակե ձողիկով կամ անձեռոցիկով լույսի անցքից հեռացնել կեղտը:

Համակարգչային բլոկը մաքրելու համար, նախ պետք է այն սրբել արտաքինից՝ փորձելով փոշին մաքրել միացման կետերից: Դա ավելի ճիշտ կլինի անել չոր շորով կամ միկրոֆիբրայով: Այնուհետեւ պտտել հեղույսները (բոլտ) եւ զգուշորեն հանել կափարիչը: Միացնել փոշեկուլը ամենացածր հզորությամբ եւ ամենափոքր գլխիկով զգուշությամբ մաքրել համակարգչային բլոկը: Դժվար հասանելի տեղերում օգտագործել սովորական ներկի վրձին կամ համակարգչային խանութից գնված հատուկ վրձին: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել օդափոխիչին, քանի որ ամենաշատ փոշին հենց դրա մեջ է հավաքվում:

Համակարգիչը պետք է մաքրել 2 ամիսը մեկ: Դա ոչ թե պարզապես հիգիենայի պահպանման համար է պետք, այլ՝ համակարգչի անխափան աշխատանքի:

Նոութբուքի մաքրման համար պետք է դիմել մասնագետի:

ՀՐԱՏԱՊ

# ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է, ՔԱՆ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԱԿԱՆՋԱԿԱԼՆԵՐԸ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՈՉ ԹԵ ՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՆ, ԱՅԼ ԱՎԵԼԻ ԵՆ ՍՐՈՒՄ

*Արդի տեխնիկայի օգտագործումը լուրջ հիմնախնդիրներ է ստեղծում մարդու առողջության համար: Այսօր դժվար է պատկերացնել կյանքն առանց համակարգչի ու բջջային հեռախոսի, թեեւ դրանց ինտենսիվ օգտագործումը լուրջ հետեւանքների է հանգեցնում, ինչի մասին մասնագետները շատ հաճախ զգուշացնում են: Նման զգուշացումների հիմնական օբյեկտը երեխաներն են, ովքեր վաղ հասակից համակեցված են ապրելու բջջային հեռախոսների հետ:*



«Վրաստանի» հետ զրույցում **Եվրոպայի էկոլոգիական կոմիտեի եւ Ամերիկայի փարմակոգնոզի ընկերության իսկական անդամ, ակադեմիկոս Ռամազ Գախոկիձեն** նշեց, որ արդեն հաստատված փաստ է, այն, որ արդի տեխնիկայի օգտագործումը երեխաների մոտ առաջացնում է ուռուցքային եւ սիրտ-անոթային հիվանդություններ: Գիտնականի խոսքով, տեխնիկական բոլոր միջոցները՝ հեռախոսները, հեռուստացույցը, սմարտֆոնը, էլեկտրամագնիսական վառարանները եւ այլն, որոնք էլեկտրամագնիսական ճառագայթումների աղբյուր են ու վտանգավոր: Այդ ցանկում առավել վտանգավորը սմարտֆոնն է, քանի որ առավել հաճախ է այն կիրառվում:

- Բջջայինների օգտագործումը լուրջ սպառնալիք է ստեղծում, քանի որ բջջայինի էլեկտրամագնիսական միջավայրը ազդեցություն է գործում մարդու ուղեղի վրա: Մարդու ուղեղը նյարդային բջիջների էլեկտրոնային բարդ ցանց է, եւ բջջային հեռախոսների օգտագործումը հանգեցնում է այդ բջիջների ակտիվության խախտման, ինչը, իր հերթին, հանգեցնում է հիպերտոնիայի, առիթմիայի, գլխացավերի, քրոնիկական հոգնածության, ուշադրության շեղման, մտավոր ու ստեղծագործական ունակությունների արգելակման եւ այլն,- մեզ հետ զրույցում ասաց Ռամազ Գախոկիձեն եւ հավելեց, որ այն առանձնակի վտանգավոր է երեխաների համար:

- Հաստատվել է, որ երեխայի ուղեղը շատ ավելի էլեկտրամագնիսական էներգիա է կլանում, ուղեղի հատվածները վնասվում են, ուստի երեխաների եւ մինչեւ 16 տարեկան անչափահասների, նաեւ հղի կանանց կողմից հեռախոսի օգտագործումն անթույլատրելի է,- ասաց ակադեմիկոսը:

Գիտնականն ուշադրությունը բեւեռեց նաեւ հեռախոսից մշտական կախվածության հիմնախնդրի վրա:

- Մարդիկ, ովքեր ակտիվ օգտագործում են բջջային հեռախոսներն ու սմարտֆոնները, փաստորեն կտրվում են իրականությունից, նրանց մտավոր ունակություններն արգելակվում են, դառնում են ագրեսիվ,- նշեց Ռամազ Գախոկիձեն եւ հավելեց, որ բջջային հեռախոսները վտանգավոր են ոչ միայն դրանք օգտագործելիս, այլ նաեւ գրպանում կրելիս, քանի որ նպաստում են մարմնի ջերմաստիճանի, զարկերակային ճնշման ավելացմանը, եւ խորհուրդ է տալիս նման տեխնիկայից (օրինակ, հեռուստացույցից) հեռու մնալ առնվազն 3-4 մետր, իսկ ինչ վերաբերում է բջջային հեռախոսին, ապա գերադասելի է խոսելիս այն ականջից թեկուզ 3 սմ-ով հեռու պահել եւ գրպանում չկրել:

- Շատերը գտնում են, որ ականջակալների օգտագործումը նվազեցնում է ռիսկը, սակայն նրանք սխալվում են: Ընդհակառակը, ականջակալներից ճառագայթումը շատ ավելի ուժեղ է եւ բացասական ազդեցություն է գործում հոգեկան ու իմունային համակարգերի վրա, հանգեցնում պիգմենտային նշանների առաջացմանը,-ընդգծեց գիտնականը:

Նրա համոզմամբ, հեռախոսները եւ տեխնիկան, որի հետ առօրյա շփվում ենք, նպաստում են տարբեր տեսակի միկրոբների առաջացմանը, վերածվում ուղեղի քաղցկեղի ռիսկ-գործոնի:

Անդրադառնալով բջջային հեռախոսներից հնարավոր սպառնալիքների թեմային՝ գիտնականը նշեց, որ երեխաների մոտ հեռախոսների հաճախակի օգտագործումը նպաստում է այնպիսի հիվանդությունների զարգացմանը, ինչպիսիք են սպիտակարյունությունը, կատարակտը, լեյկոզը, ուղեղի քաղցկեղը, բերանի խոռոչի քաղցկեղը, ալցհայմերային հիվանդությունները, տեսողության հետ կապված հիվանդությունները, խախտում է վահանաձեւ գեղձի աշխատանքը եւ այլն:

**Ակադեմիկոս Ռամազ Գախոկիձեի խոսքը կոնկրետ օրինակներով հաստատեց նաեւ մանկաբույժ Մայա Աբուլաշվիլին:**

- Վաղ հասակից երեխաների ուշադրությունը բեւեռվում է էկրանի փայլատակող, գունավոր պատկերների, մուլտֆիլմերի կերպարների, ձայների եւ այլնի վրա, իսկ հետո լրիվությամբ կենտրոնանում են բջջայինի, պլանշետների եւ պլեյերների խաղերին: Իրականում, ոչ ոք չի պահպանում մեկ ժամ հեռուստացույց դիտելու, 30 րոպե՝ բջջայինով զբաղվելու երեխաների համար գիտականորեն սահմանված ժամկետը: Մոռանում են, որ էկրանի մոտ երկար ժամանակ անցկացնելը երեխայի համար վտանգավոր է, էկրանի ճառագայթներն ազդում են երեխայի տեսողության, մտավոր ունակությունների, վերջին հաշվով՝ ֆիզիկական զարգացման վրա,- ասաց մանկաբույժն ու հավելեց, որ գերադասելի է, որ մինչեւ 2 տարեկան երեխան ընդհանրապես չառնչվի բջջային հեռախոսի հետ, 3-5 տարեկաններին հեռախոսով խաղալը կարելի է թույլ տալ ոչ ավելի, քան մեկ ժամ, իսկ 6-16 տարեկաններին՝ մինչեւ 3 ժամ:

- Եթե ծնողները պահպանեն վերոնշյալ կարգը, կպահպանեն իրենց երեխաների առողջությունը,- եզրակացրեց մանկաբույժ Մայա Աբուլաշվիլին:

Վերջում ավելացնենք, որ Առողջապահության միջազգային կազմակերպությունը եւ Քաղցկեղի ուսումնասիրության միջազգային կազմակերպությունը բջջային հեռախոսներն ու համակարգիչը դասել են մարդու առողջության համար վտանգավոր սարքերի թվում եւ խորհուրդ են տալիս առնվազն նվազեցնել դրանց օգտագործումն ու դրանցից կախվածության մակարդակը:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



☞ *Կրթության արմատները դառն են, բայց պտուղը քաղցր է:*

***ԱՐԻՍՏՈՏԵԼ***

☞ *Վատն է այն աշակերտը, որն ուսուցչին չի գերազանցել:*

***ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ***

☞ *Կրթվածությունն այն է, ինչ մնում է, երբ մոռանում են այն, ինչ սովորել են:*

***ԱԼԲԵՐՏ ԷՅՆՇՏԵՅՆ***

☞ *Կրթությունն ազատության ոսկե դուռը բացելու բանալին է:*

***ՋՈՐՋ ՎԱՇԻՆԳՏՈՆ***

☞ *Երեկն արդեն անցյալ է, վաղը՝ հանելուկ, իսկ այսօրը՝ նվեր:*

***Ա.Ս.***

***«Վրաստանի» ընթերցող***

***Թբիլիսի***

# ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## 33 ՏԱՐԻ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եվ հիմա, անկախության Հռչակագրի 33-րդ տարեդարձի օրն ուզում եմ ընդգծել, որ մեր կառավարության որդեգրած խաղաղության օրակարգը անկախության օրակարգն է, որովհետեւ, եթե ունենանք խաղաղություն, կունենանք անկախություն»,-ասված է Հայաստանի վարչապետի շնորհավորական ուղերձում:

*Ուղիղ 33 տարի առաջ, Խորհրդային Հայաստանի քաղաքացիները պատմական որոշում կայացրեցին՝ անկախությունն ընտրելով որպես միակ հնարավոր կարգավիճակ եւ երկրի հետագա զարգացման անշեղ ուղի:*

*1990 թվականի օգոստոսի 23-ին, Խորհրդային Միության նախկին հանրապետությունների կազմից Հայաստանն առաջիններից մեկն էր, որ ընդունեց անկախ պետականության հաստատումը վավերացնող հռչակագիր: Հայաստանի այն ժամանակվա Գերագույն խորհրդի կողմից Անկախության հռչակագրի ընդունումը՝ անկախ պետություն ունենալու հայ ժողովրդի անկապտելի կամքի ու սերնդեսերունդ փոխանցված երազանքի արտահայտությունն էր:*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆՇԵՑ ԾՆՆԴՅԱՆ 72-ԱՄՅԱԿԸ



***Օգոստոսի 21-ին Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը նշեց ծննդյան 72-րդ տարեդարձը: Մայր Աթոռի աշխատակազմը շնորհավորական ուղերձ է հղել կաթողիկոսի տարեդարձի առիթով:***

«Որդիական սիրով շնորհավորում ենք Նորին Սրբությանը ծննդյան տարեդարձի կապակցությամբ:

Մեր աղոթքն է առ Բարձրյալն Աստված, որ Տերը զորակից լինի Հայոց Հայրապետին քրիստոսաշավիղ նվիրական առաքելության մեջ: Ի սրտե մաղթում ենք կենաց արեւշատություն, քաջառողջ երկար տարիներ ու արդյունաշատ հովվապետություն՝ այս դժվարին օրերին հովվելու ամենայն հայոց հավատավոր հոտը՝ ի փառս Քրիստոսի, ի բարօրություն մեր Սուրբ եկեղեցու եւ ի խաղաղություն մեր հայրենիքի»:

**«Վրաստան» թերթը ի սրտե միանում է Վեհափառ Հայրապետի ծննդյան օրվան նվիրված բազմաթիվ շնորհավորանքներին, մաղթում երկարակեցություն, արեւշատություն եւ արդյունաշատ հովվապետություն:**

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

***Օգոստոսի 24-ին Ծաղկաձորում աշխատանքը սկսեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստը:***

Նիստին մասնակցելու համար Ծաղկաձոր ժամանեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ռուսաստանի Դաշնության վարչապետ Միխայիլ Միշուստինը, Բելառուսի վարչապետ Ռոման Գոլովչենկոն, Ղազախստանի վարչապետ Ալիխան Սմայիլովը, Ղրղզստանի վարչապետ Ակիլբեկ Ժապարովը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախագահ Միխայիլ Մյասնիկովիչը: ԵԱՏՄ անդամ երկրների վարչապետերը համատեղ լուսանկարվեցին, որից հետո սկսվեց նեղ կազմով հանդիպումը:

Նիստի ընթացքում քննարկվեցին ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների խորացման հարցերը եւ սահմանվեցին միության զարգացման ռազմավարական վեկտորները միջնաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում:

Կողմերը քննարկեցին նաեւ ԵԱՏՄ շրջանակներում իրավական մեխանիզմների հետագա կատարելագործումը, այլ երկրների հետ փոխգործակցության առկա ձեւաչափերի ամրապնդումն ու հավանական գործընկերների հետ կապերի հաստատումը:




Ծաղկաձորում կայացած նիստին ընդունվեց որոշում, ըստ որի, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստը կանցկացվի դեկտեմբերին Սանկտ Պետերբուրգում:

Նշենք, որ օգոստոսի 24-ին ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստից առաջ կայացավ Հայաստանի եւ Ռուսաստանի վարչապետեր Նիկոլ Փաշինյանի եւ Միխայիլ Միշուստինի հանդիպումը:

## ԵՐԵՎԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

***Օգոստոսի 24-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Երեւանը խաղաղության համաձայնագրի նոր առաջարկներն է ուղարկել Բաքու:***

- Ուզում եմ հաստատել, որ Հայաստանը հավատարիմ է խաղաղ օրակարգին: Տեղեկացնեմ, որ մենք ադրբեջանական կողմին նոր առաջարկներ ենք ուղարկել, որոնք առնչվում են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրին,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Նրա խոսքով, իրավիճակը ԼՂ հակամարտության գոտում դեռ լարված է:

- Իրավիճակի միակ փոփոխությունն այն է, որ Կարմիր խաչի եւ ռուս խաղաղապահների օգնությամբ Լաչինի միջանցքում սկսվել է բուժման կարիք ունեցող քաղաքացիների, ինչպես նաեւ մյուսների որոշ տեղաշարժ: Մենք ունենք նաեւ հաստատված տեղեկություն, որ Լաչինի միջանցքը միակողմանի բացելու ծրագիր է մշակվում, այն է՝ մուտքը ԼՂ թույլատրվելու է, բայց ելքը չի թույլատրվելու,- հայտարարեց Հայաստանի վարչապետն ու հավելեց, որ Լաչինի միջանցքը միակ ճանապարհն է, որով Ղարաբաղը միացված է Հայաստանին: Հայաստանի իշխանությունները Բաքվին մեղադրում են միջանցքը փակելու մեջ, ինչը Ադրբեջանը հերքում է:

## ՄԵԿ ՇՆՉԻՆ ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ՀՆԱ-Ն ԳԵՐԱԶԱՆՑԵԼ 8 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐԸ

***Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտարարել է, որ Հայաստանն այս պահին զարգացվածության այլ մակարդակ ունեցող երկիր է, եւ տնտեսվարողներին Հայաստանի կառավարության աջակցության գործիքներն եւս փոխվում են՝ ըստ զարգացման տեմպերի:***

***Նրա խոսքով, մեկ շնչին բաժին ընկնող Համախառն ներքին արդյունքն այս տարի կանցնի 8000 դոլարը, ինչը կրկնակի ավելի է, քան 2020 թվականին էր:***

## ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԲՐՈՆԶԵ ԱՐՁԱՆԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴԻՄԱՑ



***Հայաստանի ազգային հերոս Կարեն Դեմիրճյանի բրոնզե արձանը տեղադրվում է մարզահամերգային համալիրի դիմաց: Այս մասին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում գրել է Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը՝ կիսվ հրապարակելով լուսանկարներ: Արձանի հեղինակը քանդակագործ Սարգիս Բաբայանն է:***

## 450 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

***Հայաստանի կառավարությունը վերաբաշխում է կատարել պետբյուջեում եւ փոփոխություններ՝ նախկինում ընդունած որոշումներից մեկում. երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թթ. ծրագրերի, այդ թվում՝ միանվագ դրամական աջակցության, կանխավճարի ապահովագրության եւ երեխայի ծննդյան աջակցության ծրագրերի շրջանակում, Հայաստանի աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության հետ պայմանագիր կնքած բանկեր կամ վարկային կազմակերպություններ դիմած, ինչպես նաեւ երեխայի ծննդյան աջակցության ծրագրի շրջանակում նախարարություն դիմած քաղաքացիներին աջակցության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով:***

2022 թ. ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցները կազմել են 1,2 մլրդ դրամ, սակայն փաստացի աջակցություն է ստացել 3,088 շահառու, որոնց վճարվել է շուրջ 2,1 մլրդ դրամ, ինչը պայմանավորված է ծրագրերի շրջանակներում դիմումների թվի աննախադեպ աճով:

2023թ. օգոստոսի 15-ի դրությամբ, ծրագրերի շրջանակում աջակցություն է ստացել 1685 շահառու, որից 236-ը՝ միանվագ դրամական աջակցության, 494-ը՝ կանխավճարի ապահովագրության, 955-ը՝ երեխայի ծննդյան աջակցության ծրագրերով: Ընդհանուր առմամբ, վճարվել է 1 228 065 870 դրամ, որից 300 մլն դրամն ապահովվել է բյուջեի վերաբաշխման միջոցով, իսկ 928 065 870 դրամը ծրագրի շրջանակում 2023 թ. 1-ին, 2-րդ եւ 3-րդ եռամսյակների համար նախատեսված միջոցների հաշվին: Ըստ այդմ՝ առաջարկվում է ծրագրերի շրջանակում 2023թ. երրորդ եռամսյակում դիմող շուրջ 600 շահառուներին ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով հատկացնել 450 մլն դրամ:

## ԱՎԱՐՏՎԵՑԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԸ

***Օգոստոսի 19-ին Գառնիում տեղի ունեցավ Համահայկական խաղերի փակման պաշտոնական արարողությունը, որին մասնակցեցին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ՀԽՀԿ նախագահ Իշխան Զաքարյանը, ՀԽՀԿ ներկայացուցիչներ եւ Համահայկականին մասնակցած մարզիկներ, պատվիրակությունների անդամներ:***

«Միասնություն սպորտով» կարգախոսի ներքո Համահայկական 8-րդ խաղերը 2 շաբաթով Հայաստանում միավորել էին աշխարհի տարբեր ծայրերից ժամանած մեր հայրենակիցներին: Եկել էին 41 երկրի 181 քաղաքների ավելի քան 7000 մարզիկներ: Նրանց 80 տոկոսից ավելին առաջին անգամ էր Հայաստանում: 8 երկիր առաջին անգամ էր ներկայացուցիչ ունենում խաղերում: Ամենամեծը Ռուսաստանի Դաշնության պատվիրակությունն էր՝ 24 քաղաքների 705-հոգանոց թիմ: Ամենափոքր պատվիրակություն ունեցող երկրներն էին Հունաստանը, Սինգապուրը, Հորդանանն ու Չեխիան՝ 1-ական հոգի:

Մարզիկները մրցանակային տեղերի համար պայքարեցին 19 մարզաձեւում: Խաղարկվեց մեդալների 107 հավաքածու: Մրցումները սպասարկեց շուրջ 500 մրցավար: Ունեցանք նաեւ մրցավարներ արտերկրի 7 պետություններից:

Ամենաշատ մեդալները բաժին հասան Երեւանի պատվիրակներին: Ընդհանուր առմամբ, մեդալներ նվաճեցին 15 պետության 48 քաղաքներ:

Ինչպես 2019 թվականին, այս անգամ եւս խաղերի կայացմանն իրենց աշխատանքով մեծապես աջակցեցին կամավորները: Շուրջ 2000 կամավոր հյուրերին օգնում էր օդանավակայանում, սահմանային անցակետերում, մարզադահլիճներում, բացման եւ փակման արարողությունների ժամանակ, ամենուր:

Փակման հանդիսավոր միջոցառման ժամանակ չորս կամավորի օգնությամբ իջեցվեց Համահայկականի դրոշը, մարվեց Համահայկական ամառային 8-րդ խաղերի ջահը:

Հիշեցնենք, որ Համահայկական 8-րդ խաղերը մեկնարկել էին օգոստոսի 5-ին Գյումրիում եւ ավարտվեցին օգոստոսի 19-ին Գառնիում՝ փակման արարողությամբ:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ



«Վրաստան» թերթի 63-64 համարում պարբերականը «Դիվանագիտության արքա» Պողոս Ակոպովը Մոսկվա-Սխվիլիսի ճանապարհին նշեց 97-ամյակը» հոդվածում ծննդյան օրվա առիթով շնորհավորանքն ուղղեց վաստակաշատ դիվանագետ Պողոս Ակոպովին, ով տարիներ շարունակ իր ծննդյան օրը, հաստատված ավանդույթի համաձայն, միշտ նշում էր հայրենի ծննդավայր Ախալցիխեի մունիցիպալիտետի Սխվիլիսի գյուղում, թեեւ այս տարի հիվանդության պատճառով խախտեց ավանդույթը: Ճանապարհին նա Ռոստովում հիվանդացավ, հիվանդանոց տեղափոխվեց եւ ստիպված եղավ վերադառնալ Մոսկվա:

Ստորեւ ներկայացնում ենք Պողոս Ակոպովի «Վրաստանին» ուղղված շնորհակալական խոսքը.

*«Վան ջան, իմ թանկագին «տարեգիր», ցանկանում եմ անկեղծորեն շնորհակալություն հայտնել «Վրաստան» թերթին իմ ծննդյան 97-ամյակի շնորհավորանքի համար եւ նրա աշխատակազմին մաղթել ստեղծագործական հաջողություններ, իսկ իմ հայրենի Վրաստանին՝ խաղաղություն եւ բարգավաճում»:*

ԹԵԺ ԳԻԾ

# ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **14-81**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32) 5 000 777**
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔ

# ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է «ՆԻԿՈՐԱ ԹՐԵՅԴ»-Ի ԿԻՍԱՖԱԲՐԻԿԱՏ ՈՒՏԵՍՏՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

*Սննդի ազգային գործակալությունը հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնից ու Թբիլիսիի վարակիչ հիվանդությունների համաճարակային վերահսկման եւ վերահսկման քաղաքային կենտրոնից ստացել է երկու հաղորդում 8 մարդու սննդային թունավորման մասին, որոնց մոտ ախտորոշվել է սալմոնելյոզ, հայտնում է Սննդի ազգային գործակալությունը:*

Համաճարակաբանական հետազոտություններից պարզվել է, որ երկու դեպքում էլ հիվանդները ստացել են «Նիկորա Թրեյդ» մթերային խանութներից գնված «Կոտլետ»:

«Ստանալով ծանուցումները՝ Սննդի ազգային գործակալության Թբիլիսիի քաղաքային ծառայության լիազորված անձինք ստուգումներ են իրականացրել «Նիկորա Թրեյդ» սննդի շուկաներում հետեւյալ հասցեներով՝ Թբիլիսի, Աղմաշենեբելի N62/495, Թբիլիսի, Խոմլելի փողոց եւ օդանավակայանի տարածքում, 7-րդ փողոցի միջեւ, ինչպես նաեւ հետագծելիությամբ ստեղծված «Նիկորա Թրեյդ» ԲԲԸ-ի պատրաստի սննդի արտադրությունում (Աղմաշենեբելի նրբանցք 1,6 կմ), որտեղից երկու շուկաներն էլ մատակարարվում էին «Կոտլետ»-ով»,- նշում է Պարենի ազգային գործակալությունը:

Գործակալության տեսուչները լաբորատոր հետազոտությունների համար սննդամթերքի նմուշներ են վերցրել, որոնցում պարզվել է, որ ախտածին միկրոօրգանիզմը սալմոնելա է:

Արդյունքում տուգանվել է «Նիկորա Թրեյդ» ԲԲԸ-ի պատրաստի սննդի արտադրությունը, եւ արտադրական գործընթացը դադարեցվել է մինչեւ կրիտիկական անհամապատասխանությունների վերացումը:

ՍՊՈՐՏ

# ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՈՐԴՆ ԷՐ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԵՐՐՈՐԴԸ

Հորդանանի մայրաքաղաք Ամմանում եզրագիծը հատեց հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի 20 տարեկանների առաջնությունում Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցած չորս մեդալով, ընդհանուր թիմային հաշվարկում զբաղեցրեց երկրորդ տեղը, իսկ Հայաստանի թիմը երեք մեդալով՝ երրորդն էր:

Վրաստանի հավաքականից ոսկե մեդալ նվաճեց Աչիկո Բոլքվաձեն (87կգ):

Անցյալ տարվա 17 տարեկանների աշխարհի չեմպիոն, այս տարվա 20 տարեկանների Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր ախալքալաքցի Գոռ Այվազյանը (97 կգ) նվաճեց արծաթե մեդալ: Առաջին անգամ երկրի հավաքականի կազմում հանդես եկող Անրի Փուտկարաձեն (72 կգ) եւ Դատա Չխաիձեն (82 կգ) նվաճեցին բրոնզե մեդալներ:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա 60 կգ քաշային կարգում չեմպիոնի կոչում նվաճեց Սուրեն Աղաջանյանը: 67 կգ քաշային կարգում Գասպար Տերտերյանը երկրորդն էր, իսկ 87 կգ քաշային կարգում Վիգեն Նազարյանն արժանացավ բրոնզե մեդալի:

Թիմային հաշվարկում առաջինն Իրանի հավաքականն էր:

Մառնեուլիի մունիցիպալիտետի Չանախչիի հանրային դպրոցի մանկավարժները, ծնողներն ու աշակերտներն իրենց վշտակցությունն են հայտնում դպրոցի աշխարհագրության եւ պատմության ուսուցչուհի

***Բելլա Սոսի ՄԻՍԿԱՐՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի ընտանիքին ու հարազատներին:





# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հայկական էպոսի հերոս: 5.Ծնունդով Թիֆլիսից հայ արձակագիր, թարգմանիչ, դրամատուրգ: 10.Խոնավ, չչորացած: 11.Քաղաք Իսրայելում: 12.Լոնդոնի ֆուտբոլային ակումբը: 15.Աղացած հացահատիկ: 16.Ետադաս կապ: 17.Ապացուցված փաստ կրիմինալիստիկայում: 20.Բագրատունիների մայրաքաղաքը: 21.Լիճ Հայաստանում: 22.«Ինչպես ... փառքի ճամփա, Ես իմ Մասիս սարն եմ սիրում» (Ե.Չարենց): 25.... ու առաջ քայլել: 26.Քաղաք Մեծ Բրիտանիայում: 27.Քաղաք Իրաքում: 28.Տվյալ վայրին հատուկ եղանակ: 31.Քաղաք ՌԴ-ում: 35.Ազգային փոքրամասնություն Թուրքիայում: 36.Բուլղարուհի գուշակ: 39.«Բացվեց ...ը արեւելքում շողալով» (Ա.Ս.Պուշկին): 40.Վ.Կիկաբիձեի կեղծանունը: 42.Ցուցական դերանուն: 43.Չինաստանի տարադրամը: 45.Մարզիկների խումբ: 46.Իր առանցքի շուրջը պտտվող անիվ: 47.Գրական արձակ ստեղծագործություն: 50.Ընտանի թռչուն: 52.Ինչպես (բրբ.): 53.Արաքսի անվանումներից: 54.Իգական անուն: 55.Աստվածաշնչյան կերպար: 58.Մաքուր, վճիտ, զուլալ: 60.Ալ.Շիրվանզադեի երկերից: 61.Մարզահագուստի ֆիրմա: 62.Հայկոն ու ...: 63.Հայկական ՀԿ Թբիլիսիում:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հայոց Արշակունի թագավոր: 2.Նամակների ժողովածու: 3.Թբիլիսահայ արձակագիր: 4.Խոջիվանքում թաղված Մեծն վիպասանը: 6.Ղ.Աղայանի հեքիաթի հերոս: 7.Ուկրաինայի նախկին վարչապետ ... Տիմոշենկո: 8.Կաուչուկ արտադրող հայտնի գործարան Երեւանում: 9.Թբիլիսահայ գրող Բ.Սեյրանյանյանի երկերից «Իմ ընկեր ...»: 13.«... նորից վառիր հուրդ հայրենյաց» (ժող. երգ): 14.Վրացական համեմունք: 18.Ս.Կապուտիկյանի բանաստեղծություններից: «Քելե ...»: 19.Հեղուկի աման: 23.Ձավարը ծեծելու գործիք, սանդ: 24.Մասիս, Աբուլ, Գնդլիկ ...: 29.Ֆ.Պետրարկայի սերը: 30.Գյուրիում ծնված հայտնի դուդուկահար: 32.Պատմական Հայաստանի նահանգներից: 33.Ամերիկյան դերասանուհի, Հոլիվուդյան աստղ ... Գարդներ: 34.4-րդ դարի ասորի եկեղեցական գործիչ Զենոբ ...: 37.Ձայնարկություն: 38.Երգիծական գրող Հ.Պարոնյանի գրական հերոս: 41.Ամերիկացի ժամանակակից դերասանուհի ... Թուրման: 42.Ամերիկահայ հանրահայտ գրող: 44.Խաչիկ Հրաչյանի վեպը «...ի Մարան»: 46.Իտալացի գրող Ա.Մորավիայի վեպը: 47.Մարդու ներքին օրգան: 48.Քավա..., պահա..., խորտկա...: 49.Մորթատու կենդանի: 51.Գինու աման: 53.Ուրարտուի արքա: 54.Ռուս գրող Դոստոեւսկու վեպը: 56.Ազնիվ մետաղ: 57.Հրասայլ, ռազմական մեքենա: 59.Ժխտական նախածանց:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Լատիշ: 7.Դողալ: 9.Տաղանդ: 11.Կարաչայ: 12.Սերգո: 15.Դասաեւ: 16.Խոժոռ: 17.Թակում: 20.Մազերատի: 23.Վան: 24.Լղար: 25.Լեհուհի: 28.Կորաքանոն: 29.Ասկյար: 30.Մեա: 32.Ջեթ: 34.Տապան: 37.Ալրմաղի: 38.Պարս: 39.Անհատ: 40.Ստրաբոն: 43.Կալի: 44.Ամիգո: 45.Մրտիմ: 46.Վշտակից:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Մոլախոտ: 2.Մատադոր: 3.Վկայական: 4.Լիդս: 5.Տկար: 6.Շալո: 8.Լաչառ: 10.Դաս: 13.Եկար: 14.Գյուտ: 17.Թերեք: 18.Կայուն: 19.Միջին: 20.Մայոր: 21.Ալմաստ: 22.Շաղկապ: 25.Լացել: 26.Հայ: 27.Հոնեղ: 28.Կաթնատամ: 30.Մասսիվ: 31.Արարատ: 32.Ջամբիկ: 33.Թիկնոց: 35.Ակներ: 36.Ապակի: 41.Ամա: 42.Ոգի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445